



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

2-14







Մ. Անդրեաս

ԱԴՐԵՏԻ

Բ Ա Խ Ս Տ Հ

Թարգմ. ռուսերէնից:

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպար. Յ. Մարտիրոսյանցի. | Типогр. И. Мартиросіанца.
Օբելіановскаг ул. № 1 | 2.



АРКАДІЙ КУРІСЕ

Дозволено цензурою. Тифлістъ, 23-го мая 1896 года.

ԱՂՔԱՏԻ ԲԱԽՏԸ

Ա



շնան երկար գիշերներից մէկն արդէն լուսանալու վրաւ էր: Փարիզի այս ու այն փողոցում մէկ-մէկ սկսեցին երևալ փերեզակներն ու վաճառականները, որոնք զանազան ապրանքներ էին տանում շուկան վաճառելու: Բայց շուկան դեռ դատարկ էր. միայն պահապաններն էին, որ շտապում էին փողոցն աւելել և աղբը վերցնել: Նրանք այնպէս զբաղուած էին իրանց գործով, որ չնկատեցին փոքրիկ տղախին, որ շուկային մօտիկ մի մեծ տան քարէ սանդուխքին լինուած՝ խորը քնած էր: Ժամացոցը վեցը զարկեց: Ճուկայում երևեցան գետնախնձորով և որսի կենդանիներով ծանր բեռնաւորուած սալլակներ: Անիւների ճրճուոցից քնած տղան զարթեց: Նա վերկացաւ, ճմկոտաց, յօ-

4051 - 87

բանջեց, քնատար աչքերը տրորեց ու ծանր քալիերով առաջ դնաց: Միքանի քայլ անցնելով փողոցի անկիւնում նա տեսաւ Աստուածամօր քարի արձանը, որ զբած էր պատի մէջ փորուած խորշում: Այսպիսի արձաններ Փարիզում շատ կան: Բարեպաշտ մարդու մէկը մի պսակ էր կախել այն ծածկութից, որ արձանը պահպանում էր անձրևից: Տղան գլխարկը վերցրեց և չերմեռանդութեամբ երեսը խաչակնքեց: Նրան այնպէս թուաց, թէ Աստուածամայրը քաղցրութեամբ նայեց իւր վրայ: Մանուկը առաւօտեան աղօթքը շշնջալով ուսը ձգեց արկղիկը, միքանի քայլ արաւ և մի տան առաջ կանգնելով դուռը բաղիսեց:

— Ո՛վ դուք, բարի մարդիկ, կանչեց նա, բաց արէք:

Մի քանի ըսպէից դուռը բացուեց. մի պառաւ, բարկացկոտ դէմքով, դիշերուալ արախչինը գլխին, երեաց դրան շեմքին:

— Այդ ո՞վ է, հարցրեց պառաւն այնպիսի խիստ ձախով, որից ոչ մի լաւ բան չէր կարելի դուշակել:

— Արդեօք ծխնելովներ չունիք մաքրելու,

կամ որևէ բան նորոգելու, քաղաքավարութեամբ հարցրեց տղան, զիխարկը վերցնելով:

— Այ, զրողը ձեզ տանի, էլ հանդիստ չկայ ձեզանից, կորիք, ոչինչ հարկաւոր չէ:

Եւ պառաւը զարացած՝ դուռը վրայ խփեց:

Տղան լուռ ու մունջ առաջ դնաց և հետևեալ տան դուռը բաղիսեց, բայց ամեն տեղ միւնոյն ընդունելութիւնը գտաւ:

— Երեխ դեռ շատ վաղէ, վճռեց նա ինչն իրան. այստեղ, Փարիզում մարդիկ աւելի ուշ են վեր կենում, քան մեր գիւղում:

Եւ մայթի վրայ նատելով՝ արկղից մի կտոր չոր հաց հանեց և սկսեց ուտել:

Արդէն երկու շաբաթ էր, որ տղան թողել էր իւր հարցենի զիւղը: Նա գալիս էր առանց շտապելու. ֆանապարհին տեղ-տեղ միքանի օրով մնում էր, որպէս զի մի բան վաստակէ: Նրան ճանապարհածախս չէին տուել. իսկ ուտել-խմել հարկաւոր էր: Նա խեղճերի մօտ գտնում էր կերակուր և իջևան. իսկ հարուստ քաղաքներում ոչ մի օդնութիւն չէր գտնում: Ուրեմն մայրը հրաժեշտի ժամին զուր չէր խրատ տուել նրան թէ. «Երբ կարիք ու-

Նենաս՝ օգնութեան համար հարստին չդիմես,
այլ աղքատին դիմիր, որովհետև, ինչպէս ա-
ռածն ասում է՝ «աղքատի հալը աղքատը կը-
հասկանալ»։ Այսպէս էլ եղաւ։ Չնայելով որ
Փարիզն ահագին քաղաք էր՝ բայց նա տեղ չէր
գտնում ապաստանելու։ Նա ուշ հասաւ քաղաք,
յոդնեց, քաղցից և անսովոր աղմուկից զլուխը
սկսեց պտոյտ գալ։ Նա շատ ուրախացաւ, երբ
վերջապէս կարողացաւ մի պարապ անկիւն գըտ-
նել, որտեղ պառկեց և խոյն քնեց։

Նա Փարիզ էր եկել իւր ծննդավայրից—
Սավոյացից։ Սավոյան մի լեռնոտ և աղքատ
երկիր է Ալպեան սարերի զառիվայրների վրայ,
որոնք գարձուած են դէպի ժենեվի լիճը։ Սա-
վոյացիներից շատերն իրանց որդոց գործի են
ուղարկում արտասահման, առաւելապէս Փարիզ։
Փարիզում սավոյացիներ շատ կան։ Նրանցից
ոմանք շրջելով փողոցէ փողոց՝ պարելով ու եր-
գելով զուարձացնում են ամբոխը և այսպէս փող
վաստակում։ ոմանք տներում մանր-մունր գոր-
ծեր են անում—ծխնելոյներ մաքրում, ամա-
նեղէններ նորոգում։ ոմանք էլ շներ ու կապիկ-
ներ են խաղացնում և այսպիսով իրանց համար

ապրուստ ճարում։ Սավոյացիներն ազնիւ ու հա-
մեստ մարդիկ են, նրանք շատ խնայողութեամբ
են ապրում և այդպիսով փող յետ ձգում։ Ճա-
տերը մի փոքր գումար հաւաքելուց յետով հալ-
րենիք են վերադառնում, իսկ ոմանք Փա-
րիզին իբրև երկրորդ հայրենիքի ընտելանալով՝
այստեղ էլ մնում են մինչև իրանց մահը։ Նը-
րանք իրանց ոյժի լաւ ժամանակ օրավարձով
են աշխատում, իսկ երբ ծերանում են՝ որևէ ե-
րաժշտական գործիք ձեռքերն առած՝ փողոցէ
փողոյ են շրջում։

Հենրիխը—այսպէս էր տղախի անունը—սա-
վոյացի մի խեղճ կնոջ որդի էր և ինչպէս ու-
րիշ շատ սավոյացիք՝ նա էլ Փարիզ էր եկել
բախտ որոնելու։ Նրա առաջին փորձը, ինչպէս
տեսանք՝ անյաջող եղաւ, բայց մանուկը չյուսա-
հատուեց, այլ ախորժակով սկսեց կրծոտել իւր
ունեցած չոր հացի կտորը, որ կազմում էր նրա
բոլոր նախաճաշը։ Այդ թէև քիչ բան է ման-
կական առողջ ստամոքսի համար, բայց սավոյա-
ցին սովոր է քովի էլ բաւականանալ։

Հենրիխը փորը մի քիչ կշտացնելով՝ շա-
բունակեց իւր ճանապարհը։ Գնում էր և աշ-

քերը չորս արած ուշաղրութեամբ դիտում իւր շուրջը: Նա անցել էր ուրիշ մեծ քաղաքներով, բայց ոչ մէկը Փարիզի պէս չէր եղել: Աջ ու ձախ պարատներ էին, իսկ կտուրների վրայ անթիւ ու անհամար ծխնելոյզներ:

—Ա՞յ, այստեղ գործ շատ կըլինի, մտածեց տղան և սիրտը թունդ ելաւ ու երեսն ուրախութեամբ փայլեց. բայց նա նոյն բոպէին կրկին տխրեց մտածելով, որ եթէ ծխնելոցզներն այնքան շատ են՝ ուրեմն իրան պէս հաց փընտրող տղայք էլ շատ կըլինին:

Այսպէս ինքն իրան մտմտալով՝ չենրիխը հասաւ Աենա գետի կամուրջը. որովհետև այս գետը շատ նեղ է՝ ուստի մէկ ափից միւս ափը լաւ երևում է: Միւս ափի վրայ եղած տըներն այնքան հոյակապ չեն, այս պատճառով չենրիխը վճռեց իւր քայլերը դէպի այն կողմն ուղղել, լուսալով որ այնտեղ իրան աւելի լաւ կընդունեն:

Կամուրջը կամարաձե. էր շինուած, որպէս զի տակովը բեռնակիր նաւակներ կարողանալին անցնել. իսկ կամարը—սանդխաձեւ, ոտքով անցնողների համար: Հէնց որ չենրիխը ոտքը ա-

ուաշին աստիճանի վրայ դրեց՝ մի ինչոր փայլուն բան նրա աչքովն ընկաւ. նա խկոյն կըուացաւ և վերցրեց—մի ոսկէ մեղալիօն, ոսկէ շղթայով:

Այս մեղալիօնն երևի երեկոյեան ժամանակ էր կորցրած, որովհետև եթէ ցերեկով ընկած լինէր՝ նրան նկատած և վերցրած կըլինէին: Հենրիխն իւր գիւտը ձեռքում սեղմած՝ փոքր ինչ կանգ առաւ: Ֆախեմ և կողը մօրս ուղարկեմ, անցաւ նրա մտքովը. երևի մի քսան ֆրանկ *) կըտան:

Խեղճ տղայի մտքովն էլ չէր անցնում, որ իւր ձեռքում բռնած մեղալիօնը ոչ թէ քսան, այլ ամենաքիչը հինգ հարիւր ֆրանկ արժէր: Բայց նա որտեղից կարող էր այլպիսի թանկադին բաների արժէքն իմանալ:

*) Փրանկը արժէ մօտ 37 կոպէկ:

խօսում, պատասխանեց հալրը. մենք միթէ կըհամաձայնենք, որ մեզ վարձատրեն այն պատճառով, որ մենք ազնիւ ենք վարուել:

Եթէ քսակը տարիներով մնար էլ նրանց մօտ, փթէր ու ոչնչանար՝ ազնիւ սավոյացին դարձեալ նրան ձեռք չէր տալ:

Սակայն նա երկար ժամանակ չմնաց նըրանց մօտ. ճանապարհորդը շուտով գլխի ընկաւ և յատ դարձաւ քսակը վերցներու: Նա շատ աշխատեց սավոյացուն վարձատրել, բայց սա մերժեց. որչափ էլ նրա կնոջը և որդուն ստիպում էր փող վերցնել՝ բայց նրանցից ոչ մէկը մի կոպէկ էլ չվերցրեց:

— Ես այս մեղալիօնը կըպահեմ մինչև տէրը դանուի, վճռեց չենրիխը և մեղալիօնը վզիցը կախեց:

Նա կամուրջն անցնելով՝ քայլերը համարձակ ուղղեց դէպի ամենամօտիկ տունը, որ դուռը բաղիսէ և գործ խնդրէ:

Արեգակն արդէն բաւական բարձրացել էր: Փողոցներում կենդանութիւն էր տիրում, այնպէս որ չենրիխը երկիւղ չունէր՝ թէ կարող է մէկի հանդիսոր վրդովել: Յանկարծ նա նկա-

Բ

 Ենրիխը մեղալիօնը ծախելու մասին երկար չմտածեց: Նա շուտով մտաբերեց իւր մօր խօսքերը.—«Լաւ է մարդ քաղցած մեռնի, քան ուրիշի սեպհականութեանը ձեռք տալ»:

Բացի սրանից նա լիշեց և հետևեալ դէպէքը: Մի անգամ նրանց տանը մի անցորդ էր վեր եկել գիշերելու. նրա քնած անկողնում փողերով լիքը մի քսակ դտան. թէւ այն ժամանակ չենրիխի ծնողները շատ էլ կարիքի մէջ էին, բայց նրանց մտքովն էլ չանցաւ, որ այդ փողերից օգտուէին:

Միայն մարտն ասաց.

— Երանի՞ թէ տէրը շուտով վերադառնայ. անշուշտ մեզ կըվարձատրէ՝ երբ իւր կորուստը վերադառնենք:

— Ա! կնիկ, դու առանց մտածելու ես

տեց, որ այն սանդուլսքի մօտ, որի վրայ ինքն
էր ուղում բարձրանալ, կանգնած է սավոյա-
ցու հազուստով մի տղայ և ձեռին էլ չենրիխի
արկղիկի նման փոքրիկ արկղիկ ունի բռնած,
դէմքն էլ կարծես ծանօթ լինի: Չենրիխը հե-
տաքրքրութեամբ նայեց նրան. նա էլ չեն-
րիխին էր նայում:

— Վա, էդ դու ես, Պիեր:

— Ես եմ ու կամ, չենրիխ:

Եւ երկու հայրենակլցներն իրար փաթա-
թուեցին: Պիերը զիւղից երեք ամիս առաջ էր
դուստ եկել, ուստի նա Փարիզում խամ չէր և
կարող էր իւր ընկերոջն առաջնորդ լինել:

Այժմ այն մեծ քաղաքում օտարութիւնը
չենրիխի համար այնքան ծանր չի լինի: Պիե-
րը ամեն բան գիտէ. նա շատ բարի տղայ է.
Չենրիխին ուրախութեամբ ցոյց կըտայ, թէ որ-
տեղ կարելի է դործ դտնել: Չենրիխի ուրախու-
թեանը չափ չկար. նա մի օրուայ մէջ և թան-
կագին գանձ և ընկերոջ էր դտել:

Եղբոր մարդ մտածում է, թէ տասը տա-
բուց լիսով արդեօք ինչ է լինելու նրան թւում
է, որ այդքան չի ապրի, մանաւանդ երբ որևէ

բանի է սպասում: Իսկ երբ տասը, քսան տարի
անցնում է, և մարդ մտաբերում է անցեալը՝
նրան մի ակնթարթ է թւում:

Ճատ ժամանակ չէ, որ նրանք մանր ե-
րեխաներ էին, ասում են ծերերը իրանց հա-
սակն առած որդոց մասին,—իսկ այժմ արդէն
իրանք երեխաների տէր են դարձել:

Չենրիխն աւելի քան տասը տարի ապրեց
Փարիզում և կարելի է ասել, որ վաստ չէր ապ-
րում: Նրա համակրելի դէմքը զրաւում էր ա-
մենքին, իսկ երբ զտնում էին, որ այդ դէմքը նրա
ազնիւ հոգու արտացոլումն է՝ սկսում էին նրան
սիրել, ոչ միայն արտաքին գեղեցկութեան, այլ և
ներքին արժանաւորութիւնների պատճառով:

Վկղում թէև նա քիչ էր վաստակում,
բայց կարողանում էր այնպէս անել, որ վաս-
տակի մեծ մասը մօրն էր ուղարկում: Չետզիւ-
տէ սկսեց աւելի շատ ուղարկել, մինչև համո-
գուեց, որ մայրն այլ ևս կարիք չէ զգում:

Այս ժամանակամիջոցում նա մի քանի ան-
գամ հայրենիք գնաց, բայց ամեն անգամ կարձ
ժամանակով: Նրա զինաւոր պատճառն այն էր,
որ թէ իրան և թէ մօրը ապրուստ էր հար-

կաւոր. իսկ երկրորդ՝ Փարիզի փողոցային աղմկալի կեանքը, որին չենրիխը շատ էր ընտելացել՝ գրաւում էր նրան:

Մեղալիօնը գեռ էլի նրա մօտն էր մնում: Մեղալիօնի մէջ մօտ տասնուվեց տարեկան մի գեղեցիկ աղջկալ լուսանկար էր պրուած:

չենրիխը յաճախ նայում էր այս լուսանկարին: Նա աշխատում էր նրա գծագրութիւնը իւր լիշտողութեան մէջ լաւ տպաւորել:

Փողոցները շրջելիս, կամ որևէ գործով տները մտնելիս՝ նա պատահած կանանց դէմքերն ուշաղրութեամբ դիտում էր, որ իրան ծանօթ գծագրութիւնը գտնէ: Բայց ի գուրք: Նա մերժալիօնի տիրոջը գտնելու յուսը համարեա կորցրել էր. բայց և այնպէս իւր նըշանածի հետ մի անգամ քիչ էր մնում խռովէր՝ երբ նա խնդրեց չենրիխից, որ մեղալիօնն իրան ընծալէ:

Ժիւետոր մի փականագործի աղջիկ էր, որոնց տանը բնակւում էր չենրիխը Փարիզ գալու օրից: Այն ժամանակ երկուսն էլ երեխալ էին. երեկոները, երբ չենրիխը օրուայ աշխատանքից տուն էր վերադառնում, իսկ Ժիւետ-

որ դերձակ կնոջ մօտից, որտեղ սովորում էր կար անել՝ սկսում էին միասին որախ-որախ խաղալ: Սրանք հէնց մանկաթիւնից շատ մտերմացան, իսկ հասակներն առնելով՝ իրար հարսու փետայ լինորեցին: Հարսանիքի մասին դեռ խօսք չկար, որովհետեւ առաջ հարկաւոր էր մի փոքր փող յետ ձգել. իսկ չենրիխին այդ չէր կարողանում, քանի որ պահում էր մօրը, որին անչափ սիրում էր:

Ճատ անդամ մեր երիտասարդ դոցքը խօսում էր մեղալիօնի մասին, այդ ժամանակ ֆիւլետար նրա առիթով օդալին ամրոցներ ^{*)} էր շինում. իսկ չենրիխը լրաց էր, նրա միտքն ուրիշ էր: Մի անդամ չենրիխին մի նամակ տուին, որ տանի մի հարուստ տիկնոջ յանձնէ: Հասակաւոր տիկինը նամակը ուսանալով չենրիխին խնդրեց փոքր ինչ սպասել, իսկ ինքը դնաց միւս սենեակը, որ պատասխանը գրէ:

չենրիխը մենակ մնալով սկսեց սենեակի սարք ու կարդն ուշաղրութեամբ զնել: Յան-

*) Օդալին ամրոցներ շինել՝ նշանակում է այն պիսի լաւ-լաւ բաներ երեակացել, որոնք կատարուելու չեն:

կարծ նա կարծես արձանացած մնաց տեղն ու
տեղը:

Նա տեսաւ պատից կախած մի պատկեր,
որ բոլորավին նման էր իւր մեղալիօնում եղած
լուսանկարին:

Այն, հէնց նա է. չենրիխը չէ սխալում.
բայց հիմա ի՞նչ անէ. եթէ տանտիկնոջը հարց-
նէ, թէ այս ում պատկերն է՝ նա զուցէ իրան
յանդուգն անուանելով՝ տանից դուրս անէ. մե-
դալիօնն էլ ուղղակի տալ չէ կարելի. — զուցէ
տիկնոջ ու պատկերի կամ մեղալիօնի մէջ ոչինչ
կապ չկայ:

Մինչ նա այսպէս մտածմունքի մէջ կանգ-
նած էր՝ տիկինը նորից եկաւ: չենրիխը սիրտ
արաւ և պատից կախած լուսանկարը ցոյց տա-
լով՝ հարցրեց.

— Տիկին, ներեցէք համարձակութեանս,
այս ում պատկերն է:

— Աս իմ հանգուցեալ աղջկանս պատկերն
է, տիսրութեամբ պատսախանեց տիկինը. — Հա-
ւանում ես, այնպէս չէ. մի տես, ի՞նչ սիրուն է:
Ինչպէս երկում էր՝ որդեկորոյս մալին ու-

րախ էր, որ առիթ ունէր իւր կորստի մասին
մէկի հետ խօսելու:

— Ես նրան երկու անգամ կորցրի, շարունա-
կեց տիկինը, — մի մեղալիօն ունէի նրա լուսանկա-
րով, որտեղ նա այնպէս լաւ էր դուրս բերած,
կարծես կենդանի լինէր. և ես կորցրի այն մե-
դալիօնը:

— Ահա ձեղ այն մեղալիօնը, ասաց չեն-
րիխը և վզից հանելով՝ տուեց տիկինոջը:

Մօր ուրախութիւնն այնքան մեծ էր և
անսպասելի, որ քիչ մնաց ուշքը կորցնէր: Չեն-
րիխը նրան օգնեց բազկաթուի վրայ նստելու:

սավոյացու կոշտ ձեռքը, խնդրեց որ իրան բարեկամ համարէ և կարիք ունեցած ժամանակ համարձակ դիմէ իւր օգնութեանը:

Ցեսոյ իւր յուշատերը հանելով զրեց նրա անունը, աղջանունը, նրա գիւղի և գաւառի անունները, այնպէս որ տիկինն ուզած ժամանակ կարող էր նրան գտնել:

— Այդ ի՞նչ հարկաւոր է ձեղ, յարգելի տիկին, պարզամտութեամբ հարցրեց չենրիխը:

— Երբոր Սավոյա երթամ ճանապարհորդելու քո մօրը կայցելեմ, պատասխանեց տիկինը:

«Ուզում է մօրս վող տալ, մտածեց չենրիխը, բայց նա էլ, զիտեմ, չի վերցնի. ինչին է պէտք նրան վող, քանի որ ունի մի որդի, որ նրան օգնում է, և նա կարիք չունի ուրիշի օգնութեան»:

Հենրիխը տուն վերադառնալով՝ այս բոլորը պատմեց Փիլիստին. նա կարծում էր, որ նշանածը կըգովէ նրա արարմունքը, բայց հակառակը դուրս եկաւ:

— Վայ, իւրեխն նայեցէք, երկու հարիւր քրանկ են տալիս, և սա չէ վերցնում. չէ որ

Sիկինը փոքր ինչ հանդստանալով հարց ու փորձ արաւ, թէ չենրիխը որտեղ և ինչպէս էր զտել մեղալիօնը. իսկ վերջը նրա աղնութեամբ զրաւուած՝ կարեկցութեամբ տեղեկացաւ, թէ ովք է ինքը, որտեղացի է, ով են նրա ծնողը: Ցեսոյ նա գրասեղանի արկղը բանալով այնտեղից երկու հարիւր ֆրանկ հանեց և առաջարկեց չենրիխին ասելով.

— Այս զումարը խսոսացել էի տալ այն մարդուն, ով որ մեղալիօնը ինձ կըհասցնէ. թէ պէտ նրա արժէքն այդչափ է, բայց ինձ համար անդին է:

Հենրիխը քաղաքավարութեամբ հեռացրեց տիկնոջ ձեռքը ասելով. «աղնութեան համար ես վճար չեմ վերցնում»:

Տիվինը խորը զգածուած սեղմեց աղնիւ

այն փողով կարող էինք տուն ու տեղ լինել,
հարսանիք անել. այ լիմար, լիմար:

Հենրիխը մի խօսք անդամ չառաց: Նա
իւր ունեցած-չունեցածը հաւաքեց և տանից
դուրս եկաւ: Ֆերունի հայրը յորդորում էր նը-
րան մնալ, բայց ի զուր:

— Ո՞չ, վճռական կերպով պատասխանեց
Հենրիխը. այն աղջիկը, որ ինձ յանդիմանում է
իմ աղնուոթեան պատճառով՝ չէ կարող ինձ կին
լինել:

Անցան տարիներ... Հենրիխն արդէն քա-
ռասուն տարեկանից աւելի էր: Ճարունակ միա-
տեսակ կեանք վարելով՝ անց էր կացնում իւր
օրերը. աշխատում էր, պահում էր մօրը, որին
մի-մի անդամ այցելում էր: Իսկ այն տիկնոջը
էլ առիթ չունեցաւ տեսնելու:

Մի անդամ օրուայ աշխատանքից տուն
գառնալով՝ նա անպատելի կերպով հանդիպեց
մի ոստիկանի, որ ցյուած կանդնած էր իւր
դրան մօտ և իրան էր ոպատում:

Նա ամենեին չվախեցաւ, որովհետև դի-

տէր, որ ինքն երբէք ոչ մի յանցանք գործած
չունի: Ոստիկանը նրան մի թուղթ յանձնեց,
որով նօտարը նրան իւր մօտ էր հրաւիրում:
Հենրիխը ոստիկ հետաքրքրուած գնաց նօտա-
րի մօտ:

— Գնուք էք սավոյացի պ. Հենրիխը, հարց-
րեց նօտարը:

Հենրիխը սովոր չէր, որ իրան պարսն ան-
ուանէին, այդ պատճառով շփոթուեց և խկացն
չկարողացաւ պատասխանել:

Նօտարը նրան յայտնեց՝ որ մարկիզուհի
Սօլանժը (Հենրիխը լիշեց, որ մեղալիօնի տի-
րուհին այսպէս էր կոչւում) վախճանուել է և
Հենրիխին կտակել է տարեկան հազար ֆրանկ
կենսաթոշակ, որ նա մինչև մահը ստանայ՝
որտեղ և երբ կամենայ:

Հենրիխը չէր կարող մերժել մեռած մար-
դու նուէրը. ուստի նա համաձայնեց կտակին և
գնաց իւր հայրենիքը—Սավոյա:

Նա իրան բաւական յոզնած էր զգում.
մայրն էլ զառամել էր, մի ոտն արդէն գերեզ-
մանումն էր: «Նա էլ երկար չի ապրի, այսու-
հետև պէտք է նրա հետ լինեմ, մտածում

էր չենրիխը, այ թէ կուրախանալ պառաւ
մարս երբ կիմանալ, որ մենք ասկահովուած
ենք, և ես նրանից էլ բաժանուելու չեմ»:

Այսպէս երազում էր ինեղձ սավոյացին ըս-
դուշակելով՝ թէ ճակատագիրը նրան լնչպիսի
վիշտ է պատրաստում։ Երեսի պառաւին վիճա-
կուած չէր իւր որդու հետ ապրել։ Նա որդու
վերադառնալոց միքանի ամիս առաջ մեռել
էր։ Հենրիխը մօր մահը ճանապարհին իմացաւ։
Նա այլ ես չուզեց իրանց թափոր մնացած
խրճիթը մտնել, այլ ուզզակի դերեզմանատուն
դնաց և քարաշէն պարսպի դրանը կանդնեց։
Նրա ոյժը չէր պատում, որ այնտեղ մտնէր և
մօր սիրալիր համբոլների փոխարէն՝ նրա սառը
զերեզմանը գտնէր։

¶

Ամբողջ կեանքումս ես մօրս համար աշ-
խատեցի, մտածում էր չենրիխը, և այժմ, երբ
նրան պիտի միխթարէի և ինքո էլ հանգստա-
նալի՝ մէն-մենակ եմ մնացել։ Եթէ ես այնպէս
խստապահանջ չլինէի ինձանից՝ ֆիւետոը իմ
կինը կրլինէր, և այս կորուսս գուցէ հեշտու-
թեամբ տանէլ։ Բայց ոչ, ես իրաւունք չունիմ
տրտնջալու։ Երբ առաջին անգամ Փարիզ գնա-
ցի՝ ոչ մի ապաստանարան չգտնելով՝ քննեցի
բայց թեալ մի լայն փողոցում։ այն ժամանակ
Աստուածամալըն ինձ պահպանեց և լետոյ էլ
միշտ հոգում էր իմ մասին և ազատ էր պա-
հում ամեն տեսակ փորձութիւններից։ Այս, իմ
խիզճը հանգիստ է։ Դու ինձ տեսնում ես երկ-
նակին բարձունքներից, կարդում ես իմ հոգու
մէջ եղածը, և ես զգում եմ, մայր իմ, որ ինձ
օրհնում ես երկնքից։

Ահա գալիս եմ, որ գերեզմանդ համբուրեմ:

Եւ նա համարձակ քայլերով պարսպից ներս
մտաւ:

Անցան տարիներ... չենրիխն արդէն ծե-
րացել էր, նրա աչքերը կուրացել էին. նա ապ-
րում էր իւր հայրական խրճիթում, որ ինքը
նորոգել և կարգի էր բերել: Նրա մօտ ապրում
էր Գուստավ անունով մի որբ, խարտեաշ տղայ,
որին հարազատ որդու պէս էր պահում: Հեն-
րիխը պարապութիւնից սկսեց փանդիով վրայ
նուազել սովորել: Նա ամբողջ օրերով ածում էր,
բայց նրան լսող չկար. Գուստավն էլ գերադա-
սում էր իւր ընկերների հետ լեռների վրայ
թափառել:

— Գուստավ, կուզենալի՞ր Փարիզը տեսնել,
մի անդամ հարցրեց ծերունին:

— Ուզում եմ, պատասխանեց Գուստավը,—
ասում են, այնուեղ շաքարեղէն շատ կալ:

— Եթէ այդպէս է՝ գնանք: Այնուեղ ջամ-
բազներ, պարուներ և ուրիշ շատ հետաքրքիր
բաներ կրտեսնես. շաքարեղէն էլ քեզ համար
շատ կրգնեմ:

Ֆերունին վճռում է գնալ: Այնուեղ ես

փանդիով վրայ կընուագեմ և Գուստավն էլ ինձ
կառաջնորդէ: Այսպիսով մենք մեզ համար ապ-
րուստ կընարենք, իսկ իմ թոշակից Գուստավի
համար դրամագլուխ կըկազմուի:

Այսպէս էր բացատրում ծերունին իւր դի-
տաւորութիւնը հարեաններին, որոնք շատ էին
զարմանում նրա այս վճռի վրայ:

Բայց գնալու խսկական պատճառն այն էր,
որ ծերունի չենրիխը Փարիզին շատ էր կարօ-
տել, թէւ այդ բանը ոչոքի՝ մինչեւ անգամ
ինքն իրան՝ չէր ուզում խոստովանել:

Վ Ե Ր Զ

271. а съмнением о боязни края. А не съмнение
о съмнении, а о съмнении в съмнении. Съмнение о съмнении
и съмнение в съмнении. Но съмнение о съмнении
— это съмнение о съмнении о съмнении о съмнении
и съмнении в съмнении. А съмнение о съмнении
— это съмнение о съмнении о съмнении о съмнении
и съмнении в съмнении о съмнении о съмнении
и съмнении в съмнении о съмнении о съмнении

272.

102

Eo	№	309/16
МАГ		
14.10.	14.10.	н.
СОВЕТСКАЯ СОЦИАЛИСТИЧЕСКАЯ РЕПУБЛИКА БАШКОРТОСТАН		

ՀՀ Ազգային գրադարան



NL0343247

36791